

չակման, դիւղատնտեսական աշխատանքներու մեքենայացման, ինչպէս նաեւ հասարակական կենցաղային պէտքերու: Ստորերկրեայ ջերմոցներէն տաք ջուր պիտի մատակարարուի նաեւ ձմրան եղանակին:

Ելեկտրակայանին կից պիտի շինուի նաեւ հսկայ սառնարան, որ սառոյց պիտի հայթայթէ ամրան եղանակին՝ դիւղատնտեսական մթերքներու պահպանման համար:

Միաժամանակ ակադեմիական դիտնականներու ղեկավարութեամբ՝ նախապատրաստական աշխատանքներ կը կատարուին Ալլըր լիճի ափին, արեղակնային զօրութեան օդադործովի նոր հնարաւորութիւններ գտնելու ուղղութեամբ:

(Էջմիածին, 1956, ք. 4-5, էջ 110)

ՋՈՒԹԱԿԱՆ ՄԱՆՈՒԿ ԲԱՐԻՔԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Ապրիլ 14, Ծաղկապարտ: Քանի մը օրէի վեր Վենետիկ կը գտնուի ջութակահար Մանուկ Բարիքեան: Կու գայ Լոնտոնէն, հանդիստի կարճ շրջան մը անցընելու համար Երազային այս քաղաքին մէջ, բայց յատկապէս այցելելու համար դիւթական Ս. Ղազարը, եւ անոր հարուստ մատենադարանը:

Ծնած Կիպրոս, 16 տարեկանին կ'անցնի Անգլիա, ուր կը կատարելագործէ իր արուեստը: Հինգ տարեկանէն սկսած է նուագել. իր առաջին ուսուցիչն եղած է իր մօրեղբայրը. իսկ Լոնտոնի մէջ աշակերտած է հունգար համբաւուր ջութակահար՝ Լուդվիկ Փէչեքայի, որ իր կարգին աշակերտն էր Հոսպայի: 1946ին կը շահի կարեւոր մրցանակ մը եւ այնուհետեւ երաժշտական աշխարհին ծանօթ դէմքերէն մէկը կը դառնայ Անգլիոյ մէջ: Ներկայիս նա առաջին ջութակահարն է Լոնտոնի Philharmonia նուագախումբին:

Այս ամառ Պատկէքի մէջ, Հոռմի Սաւերիա Ձէլիլա Երաժշտանոցի նուագախումբին հետ պիտի ներկայացնէ Ս. Խաչատուրեանի ջութակի համերգը:

Տուած է բաղմամբիւ նուագահանդէսներ Անգլիոյ մէջ. ապա նաեւ արտասահման, Սթոքհոլմ, Սթրազպուրկ, ուր արժանացած է մեծամեծ գովեստներու:

Յաճախ կը նուագէ Լոնտոնայի ձայնապիւղնէն եւ ունի պատրաստած երգապլանակներ:

Իր յայտագրին մէջ կը նշմարուին Պալս, Պէթհոլմ, Մոցարթ, Պոսսմա, Տիտրաք,

Հինտէմիթ, Մէնտելսոն, Ջաչեովսքի, Շոսթաքովիչ, Խաչատուրեան:

Ձինք ներկայացնող յայտագիր մը ունիմ ձեռքիս տակ. առաջին իսկ բառերը կ'ընդգծեն իր ազնուական ծագումը. ԾԸՆԱԾ ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐԷ...:

Ուրեմն ջութակահար Մանուկ Բարիքեան անոնցմէ է՝ որ հայ արժէքները եւնրոպացիներու աչքին կը փայլեցնեն: Այս տեսակէտով ան դեռ աւելի մօտիկ է մեր սրտին ու մեր ալ պարծանքն է:

Իբր արտայայտութիւն Միլիթարեան հաստատութեան հանդէպ ունեցած իր բարձր գնահատանքին եւ սիրոյն, փափաքեցաւ նուագահանդէս մը տալ Միլիթարի յարկին տակ, նոյն ինքն Միլիթարի մեծ գրադարանի դահլիճին մէջ: Մեծ ճարտարութեամբ եւ արուեստագէտի բարձր արտայայտութեամբ նուագեց Պալս Sonata No. 1, in sol min. per violino: Հիանալի էր մանաւանդ երկրորդ մասը, ուր տեսանք իսկապէս Բարիքեանի մոգական սլացքը երաժշտական այդ դժուարին fugue-ի ընթացքին:

Մտերմական երկրորդ նուագահանդէս մըն ալ՝ Մուրատ-Ռափայէլեան վարժամանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ յաջորդ օրը, գլորոցի աշակերտներուն առջեւ, որոնք խանդավառօրէն ծափահարեցին մեր սիրելի արուեստագէտին ձրքերը:

Բայց այստեղ կ'ուզենք արձանագրել նաեւ մասնաշաղկապ մէկ նախասիրութիւնը ջութակահար Ս. Բարիքեանի:

Ան ջութակին չափ կը սիրէ հայկական հին տաղերութիւնները. իր ազնիւ Տիկնոջ հետ խոր մասնագէտներ կը ներկայանան մեր 1700եան տաղերական արուեստին. մանրամասնօրէն կը ճանչնան տաղերութեան հին դերերու տեսակներն ու անոնց պատմութիւնը. իրենք իսկ թանկազին հաւաքածոյ մը ունին նման հրատարակութիւններու եւ կը ջանան օրէ օր զայն ճշտեցնել: Անսահման խանդաղատանքով է որ դիտեցին, յափշտակութեամբ ու հիացումով երկարօրէն զննեցին, իրենց ձեռքերուն մէջ շոյեցին այն հին հրատարակութիւնները՝ որոնցմէ քիչ օրինակներ միայն կան աշխարհիս վրայ. այսպէս Մեղապարտ Յակոբի Աղթարքը 1512էն, Ժամադիրը եւ Սաղմոս 1567էն, որոնք մեր տաղերական առաջին պարծանքներն են՝ զած են. մասնագէտի աչքերով քննեցին Ձուղայի, Մարտիկոյ եւ Հոռմի հայկական հին տաղերութիւններու դերերու տեսակները, անոնց դեղագիտական հանգամանքը:

Մենք ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք սիրելի Մանուկ Բարիքեանին, թէ՛ իր հանրային ասպարէզին մէջ՝ իր ջութակի նորանոր յաղթանակներով, թէ՛ իր գրասենեակի հայագիտական աշխատանքներուն մէջ:

Յոյս ունինք կրկին զինք ծափահարելու մօտ ատենէն նաեւ իտալական բեմերու վրայ:

ԽՄԲ.

